



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«10» Հոկտեմբերի 2021 թ.

No 1/12-2/71709-2021

«ՀԱՐՄՈՆԻԱ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ՝
ՊԱՐՈՆ ՄՈՒՐԱԴ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ, ՍԵՎԱՍՏՈՊՈԼՅԱՆ 45
ԴԱՍԻՉ՝ 0028, ՀԵՌ. 010-500-140
ԷԼ. ՓՈՍՏ՝ INFO@HF.AM

Հարգելի պարոն Մուրադյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2021 թվականի փետրվարի 24-ին (համաձայնագրի կնքման ամսաթիվը՝ 16.04.2021թ.) ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Կատարող) միջև կնքվել է ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), սակայն Կատարողի կողմից խախտվել է ծառայությունների մատուցման ժամանակահատվածը և մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով չհամապատասխանող ծառայություն, չի ապահովվել Պայմանագրի 2.4.1 կետով սահմանված պարտավորությունը և կատարման ընթացքի վերաբերյալ մասնագիտական խմբի կողմից տրվել է բացասական եզրակացություն:



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 կետի ա) և բ) ենթակետերը՝ Պատվիրատուն ստիպված է պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար միակողմանի լուծել 2021 թվականի փետրվարի 24-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով գնման պայմանագիրը և պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 9 000 000 ՀՀ դրամի որակավորման և 6 000 000 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նաև նախաձեռնում է «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Միևնույն ժամանակ Ձեզ եմ ներկայացնում Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու մասով հաշվարկված տուգանքի և տույժերի հաշվարկը.

տուգանքի հաշվարկ՝ $60\,000\,000 \times 0.5\% = 300\,000$ ՀՀ դրամ,

տույժի հաշվարկ՝ $60\,000\,000 \times 0.05\% = 30\,000$ ՀՀ դրամ,

41 աշխատանքային օր ուշացման համար՝ $30\,000 \times 41 = 1\,230\,000$ ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ, որ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին փոխանցել 1 530 000 ՀՀ դրամ՝ Պայմանագրի 5.2 և 5.3 կետերի համաձայն որպես տուժանք և տույժ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատ.՝ Գ.Նազարյան
Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 060-544-704



ՅՅ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am